ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ և ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԼՄԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/1-2»

ք.Ալավերդի «01» մարտ 2021թ.

Ալավերդու համայնքապետարանը, ի դեմս համայնքապետ Ս.Խեչումյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Վանարխ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ղուկասյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և երաշխավորագրի տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի աշխատանքը պայմանագրինհամապատասխանող աշխատանքով անհատույցփոխարինմանողջամիտժամկետ ապահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու աշխատանքի համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 990000 (ինը արյուր ինսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

յտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուսկ ողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչուշ, քան պայմանագրով իսկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀԼոռու մարզ, Ալավերդու քաղաքապետարան Զորավար Անդրանիկի 8Ա ՀՀՖինանսների նախարարության Գործառնական վարչություն h/h900262121099 ՀՎՀՀ 06954208	<<Վանարխ>>ՍՊԸ Լոռու մարզ ք.Վանաձոր, Վարդանանց 19-1 << Այ Դի Բանկ>> ՓԲԸ Վանաձոր մ/ճ h/h 11810008797200 ՀՎՀՀ 06931375
Սասուն Խեչումյան	Ավետիք Ղուկասյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« » 2021 թ. կնքված
«ԼՄԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/1-2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	ԱՆՎԱՆՈՒՄ	Աշխատանքի Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավոր գինը/ ՀՀդրամ	Ընդհանուր գինը/ ՀՀդրամ	Ընդհանուր քանակը	կատարման հասցեն	կատարման Ժամկետը**
2	71241200	Ալավերդի համայնքի Ալավերդի բնակավայրի բազմաբնակ արանշենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և երաշխավորագրի տրամադրման աշխատանքներ	1.Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համապատասխան: 2. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագիծը համաձայնեցնել Ալավերդու քաղաքապետարանի հետ: 3.Նախագծի հետ ներկայացնել համապատասխան երաշխավորագիր: 4.Նախագիծը ներկայացնել 3 օրինակից, ինչպես նաև էլեկտրոնային կրիչով: 5.Ներկայացնել օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: 6.Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաների, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: Աշխատանքներն ունեն ներքոհիշյալ տեխնիկական բնութագրերը 1. Ասբոշիֆերով ծածկի քանդում, ջրհորդանի քանդում, ջրատար խողովակների ապամոնտաժում, տանիքի վնասված փայտանյութի ապամոնտաժում, ջրհորդանի փայտանյութի ապամոնտաժում 2.Տանիքի նոր փայտանյութի տեղադրում՝ ծպեղնաոտքեր, թեքաններ, կավարամած առանձին տեղերում, ջրհորդանի տախտակների տեղադրում	դրամ	255,0	255,0	1	Ալավերդի համայնք	Պայմանագրի կնքման օրից 15 օրացուցային օր

			3.Ջրհորդանի տեղադրում, պիպերի տակի և օդափոխության բլոկների փեշերի տախտակների տեղադրում 4. Տանիքի ծածկույթի իրականացում ց/ պրոֆիլավոր ներկված թիթեղից ԿՊ-25-0.5 5.Տանիքի փայտե կոնստրուկցիաների, կավարամածի հրդեհապաշտպան հրակայուն լուծույթով 6.Ձեղնահարկի լուսամուտների փայտե կոնստրուկցիաների վերանորոգում 7.Ձեղնալուսամուտի պատերի երեսապատում ներկված ց/ թիթեղով 0.5 մմ 8.Ջրթափ խողովակների, ձագարների ծունկերի, պիպերի, օդափոխության բլոկների, տանիքի ծածկույթի հետիպման մասերի, ճակտոնների տեղադրում (բոլորը ներկված ցինկապատ թիթեղից) 9.Տանիք բարձրացող մտոցի, ձեղնահարկի լուսամուտների շերտափեղկերի տեղադրում, տանիքի պողպատե պաշտպանիչ մետաղական ճաղաշարի մոնտաժում, յուղաներկում, գլխանոցների տեղադրում ներկված ցինկապատ թիթեղից 10.Անհրաժեշտության դեպքում օդափոխության բլոկների պատերի վերանորոգում, ամրացում 11.Շինաղբի բարձում, տեղափոխում						
4	71241200	Ալավերդի համայնքի Ալավերդի բնակավայրում կոյուղագծերի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և երաշխավորագրի տրամադրման աշխատա	1.Նախագիծըմշակելգործողնորմերիպահանջներինհամապատասխան: 2. Նախագծա-նախահաշվայինփաստաթղթերիկազմմանաշխատանքների ավատիցհետոնախագիծըհամաձայնեցնելԱլավերդուքաղաքապետարանիհետ: 3.Նախագծիհետներկայացնելիամապատասխաներաշխավորագիր: 4.Նախագիծըներկայացնել 3 օրինակից, ինչպեսնաևէլեկտրոնայինկրիչով: 5.Ներկայացնել օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: 6.Ներկայացնել աշխատանքների կատարման համարպահանջվող լիցենզիաների, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: Ալավերդի Համայնքի Ալավերդի քաղաքի կոյուղագծերի վերանորոգման աշխատանքներն ունեն ներքոհիշյալ տեխնիկական բնութագրերը.	դրամ	545,0	545,0	1	Ալավերդի համայնք	Պայմանագրիկնքմանօրից 15 օրացուցայինօր

		նքներ	1. 3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով, ձեռքով 2. Բնահողի հետլիցք մեխանիզմով, ձեռքով, տոփանումով 3. Գոյություն ունեցող կոյուղու պոլիէթիլենային խողովակների մաքրում, լվացում 4. Պոլիէթիլենային խողովակների տեղադրում, փորձարկումով 5. Խճի նախապատրաստական շերտ 5. Բետոնե հիմքերի կառուցում 6.Կոյուղու ե/ բ հավաքովի դիտահորի կառուցում, օղակ, կափարիչ, մտոց 7. Դիտահորի արտաքին պատերի հիդրոմեկուսացում երկշերտ բիտումի մածուկով, փորձարկում 8.Աղբի բարձում, տեղափոխում						
6	71241200	Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք և Հաղպատ բնակավայրերում այգու և պուրակի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և երաշխավորագրի տրամադրման աշխատանքներ	1.Նախագիծը մշակել գործող նորմերիպահանջներին համապատասխան: . Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խատանքների ավարտից հետո նախագիծը համաձայնեցնել Ալավերդու քաղաքապետարանի հետ: 3.Նախագծի հետ ներկայացնել համապատասխան երաշխավորագիր: 4.Նախագիծը ներկայացնել 3 օրինակից, ինչպես նաև էլեկտրոնային կրիչով: 5.Ներկայացնել օգտագործված նյութերիերաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: 6.Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիաների, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները: Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի և Հաղպատ կավայրերում այգու և պուրակի կառուցման աշխատանքներն ունեն ներքոհիշյալ տեխնիկական բնութագրերը. Ալավերդի համայնք 1.Մետաղական ցանկապատի կառուցում, բետոնացում, յուղաներկում Բազալտե սալիկներից H= 30 մմ հատակների կառուցում, գ/ ավազի հարթ, շերտ 3. Ավազի նախաշերտ Մայթերի իրականացում գունավոր սալիկներով /ավազով կարերի լցում/ 5.Տարածքի կանաչապատում 6.Տանիքի փայտանյութի փոխում Տանիքի ցինկապատ պրոֆիլավոր թիթեղի տեղադրում 0.5 մմԿՊ-21	դրամ	190,0	190,0	1	Ալավերդի համայնք	Պայմանագր ինքման օրից 20 օրացուցային

			ախովի առաստաղի իրականացում ՊՎՔ նյութերի սալերից 9.Փայտանյութի ներկապատում 10.Բնահողի մշակում, փռում, հետլիցք 11. Բետոնե հիմքերի կառուցում Մետաղական խողովակներից նստարանների կառուցում, յուղաներկում 13. Աղբի հեռացում Հաղպատ համայնք 1.Մետաղական ցանկապատի կառուցում, բետոնացում, յուղաներկում Բազալտե սալիկներից H= 30 մմ հատակների կառուցում, ց/ավազի հարթ, շերտ 3. Ավազի նախաշերտ այթերի իրականացում գունավոր սալիկներով /ավազի լցում կարերի/, բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում 5.Տարածքի կանաչապատում 6.Բնահողի մշակում, փռում, հետլիցք 7. Բետոնե հիմքերի կառուցում Մետաղական խողովակներից նստարանների կառուցում, յուղաներկում 9.Աղբի հեռացում						
						990,0			

* աշխատանքիկապարմանվերջնաժամկետըչիկարողավելինել, քանիվյալպարվադեկտեմբերի25-ը:

Գ Ն Ո Ր Դ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀԼոռու մարզ, Ալավերդու քաղաքապետարան Զորավար Անդրանիկի 8Ա ՀՀՖինանսների նախարարության Գործառնական վարչություն հ/հ900262121099 ՀՎՀՀ 06954208	<<Վանարխ>>ՍՊԸ Լոռու մարզ ք.Վանաձոր, Վարդանանց 19-1 << Այ Դի Բանկ>> ՓԲԸ Վանաձոր մ/ճ հ/հ 11810008797200 ՀՎՀՀ 06931375
Սասուն Խեչումյան _______________ (ստորագրություն) Կ.Տ.	Ավետիք Ղուկասյան _______________ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
« » 2021 թ. կնքված
«-ԼՄԱՀ-ԳՀ-ԱՇՁԲ-21/1-2» ծածկագրով պայմանագրի

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ եռամսյակ-ի, այդ թվում**											
			I եռ			IIեռ			IIIեռ			IVեռ			Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
2,4,6	71241200	Ալավերդի համայնքի կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և երաշխավորագրի տրամադրման աշխատանքների ձեռք բերում	**0**			**0**			**495000**			**990000**			**990000**

ԳՆՈՐԴ

ՀՀ Լոռու մարզ, Ալավերդու
քաղաքապետարան
Զորավար Անդրանիկի 8Ա
ՀՀ Ֆինանսների նախարարության
Գործառնական վարչություն
հ/հ900262121099
ՀՎՀՀ 06954208
Սասուն Խեչումյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Վանարխ>> ՍՊԸ
Լոռու մարզ ք.Վանաձոր,
Վարդանանց 19-1
<< Այ Դի Բանկ>> ՓԲԸ
Վանաձոր մ/ճ
Հ/հ 11810008797200
ՀՎՀՀ 06931375
Ավետիք Ղուկասյան

(ստորագրություն)

Կ.Տ.